ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> մայիսի 2016 թվականի N:133 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԳԱՂՏՆԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ,ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ,ԳԱՂՏՆԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N: 98-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի դեկտեմբերի 30-ի N:626-կգ որոշմամբ հաստատված հրահանգի 2.5-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում գաղտնի փաստաթղթերի հաշվառման ու պահպանման,գաղտնիության ռեժիմի ապահովման միջոցառումների իրականացման և գաղտնի գործավարության վարման աշխատանքների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տիգրան Ղարիբյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվականի մայիսի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանում գաղտնիության ռեժիմի ապահովման և գաղտնի գործավարության վարման աշխատանքների իրականացման մասին>> N: 98-Ա որոշումը:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է